

## ՉՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### Գ. Վ. ԲԱՂՎԱՍՏՐՅԱՆ

Ապրանքային արտադրության զարգացմանը զուգընթաց՝ ձևավորվել են տնտեսական ռազմավարության նոր համակարգեր, որոնք, իրենց առանձնահատկություններով հանդերձ, որոշիչ ներգործություն են ունեցել հասարակական արտադրության թե՛ էքստենսիվ և թե՛ ինտենսիվ զարգացման, մրցակցության ձևերի կատարելագործման վրա: Դա նշանակում է, որ տնտեսավարման մի ձևից մյուսին անցումը հասարակական արտադրության զարգացման օբյեկտիվ հետևանք է և պայմանավորված է տվյալ փուլին բնորոշ առանձնահատկություններով, ռազմավարության առանձին հատկություններով, որոնք կարող են ինչպես խթանել, այնպես էլ խոչընդոտել տնտեսավարման այս կամ այն ձևի զարգացումը:

Տնտեսավարման առանձին ձևերի հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները մշտապես հետազոտվել են տնտեսագետների կողմից և մշակվել հիմնարար տեսություններ, որոնք այսօր էլ ունեն կարևոր նշանակություն:

Ասկայն շատ տնտեսական երևույթների մեկնաբանությունները վիճելի են և լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն: Դրանց թվում է, մասնավորապես, շուկայական տնտեսության գործընթացներին պետության մասնակցության հիմնահարցը, որի հետազոտման խնդիրն է՝ որոշել տնտեսավարման գործընթացում պետության դերը, մշակել պետական ներգործության հստակ և հուսալի համակարգ, ճշտել գնագոյացման գործընթացին պետության մասնակցության չափանիշներն ու սահմանները, հիմնավորել տնտեսության պետական կարգավորման և, մասնավորապես, գնագոյացման պետական կարգավորման անհրաժեշտությունը և նպատակները, ինչպես նաև՝ կարգավորման տնտեսական լծակներն ու ուղիները:

Տնտեսագիտության բնագավառում այս հարցերի շուրջ ծագած բանավեճերը սկիզբ են առել դեռևս Ա. Սմիթի ժամանակներից և շարունակվում են առայսօր:

Այս բանավեճին առնչվող հիմնահարցերի լուսաբանման նպատակով փորձենք ծանոթանալ տնտեսավարման տարբեր եղանակներին, դրանցում պետության ունեցած դերին, ցույց տալ դրանց առանձնահատկությունները, ընդգծել այն հիմնադրույթները, որոնք այսօր ընդունելի են տնտեսագիտության կողմից:

Ժամանակակից տնտեսագիտությունը նշում է տնտեսության զարգացման երեք եղանակ: Տնտեսավարման առաջին եղանակը սեփականության բազմաձևության, մասնավորապես մասնավոր, կոլեկտիվ, պետական սեփականության վրա հիմնված ազատ ձեռնարկատիրական գործունեության կազմակերպումն է, որն անվանում են ազատ զարգացող շուկայական տնտեսություն:

Տնտեսավարման ազատ շուկայական ձևի հիմնական կարգավորիչը տնտեսագետները միանշանակ համարում են մրցակցությունը, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտները ձգտում են հասարակության աճող պահանջներին

համապատասխան արտադրել ավելի շատ և լուծել առավելագույն շահույթ ստանալու իրենց նպատակային խնդիրը:

Ազատ զարգացող շուկայական տնտեսությունում աստիճանաբար ընդլայնվում են արտադրության մասշտաբները, փոխվում են արտադրության աճի տեմպերը, ձևավորվում և գործում են ազատ շուկայական զները, բարձրանում է արտադրանքի որակը, փոխվում են դրանց նկատմամբ պահանջարկն ու առաջարկը: Այս ամենը կատարվում է տնտեսության զարգացման շուկայի ինքնակարգավորման գործընթացով:

Տնտեսական այս համակարգի տեսական հիմունքները գիտականորեն մշակել են դասական տնտեսագիտության ներկայացուցիչներ՝ Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն և ուրիշներ: Իր ժամանակին Ա. Սմիթը (1723-1790) ընդգծել է, որ ազատ շուկայական տնտեսության մեջ առանձին անհատներ, ղեկավարվելով սեփական շահերով, գործում են ի շահ մյուս մարդկանց և ամբողջ հասարակության: Շուկայական կարգավորման այս մեխանիզմը հասարակական շահն ապահովում է ավելի արդյունավետ, իսկ արտադրողների ու սպառողների շահերը կարգավորվում են «անտեսանելի ձեռքի» սկզբունքով:

Այդ դրույթներին համապատասխան՝ ձևավորվել է, այսպես կոչված, «լեյսեյ ֆեա»-ի՝ ժամանակաշրջանը: Դրանից հետո եկամտի և սպառման անհավասարության երևույթները վկայում են շուկայական տնտեսավարման ձևի որոշ ձախողումների մասին:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ շուկայի ձախողումները պարբերաշրջանների ձևով կրկնվում են և բացասական ներգործություն ունենում տնտեսության զարգացման տարբեր ոլորտների վրա: Այդ ձախողումների պատճառն այն է, որ շուկաները չեն կարող ապահովել հանրային բարիքների և մասնավոր բարիքների միջև հաշվեկշռվածություն, եկամտների արդարացի բաշխում:

Այս առումով բաժանում ենք Փ. Սամյուելսոնի և Վ. Նորդհաուսի այն կարծիքը, որ շուկաներն անհրաժեշտաբար չեն ստեղծում եկամտի, ռեսուրսների այնպիսի բաշխում, որը դիտվեր սոցիալապես անսչառ կամ արդար: Մաքուր «լեյսեյ ֆեա»-ի շուկայական տնտեսությունը կարող է ստեղծել եկամտի և սպառման անընդունելի բարձր մակարդակներ: Դա նշանակում է, որ շուկայական մեխանիզմը կարող է հանգեցնել եկամտների բաշխման հասարակայնորեն անցանկալի հետևանքների:

Եկամտների բաշխման և սպառման անհավասարությունների առաջացման մյուս պատճառն այն է, որ առանձին դեպքերում եկամտները որոշվում են ժառանգության, աշխատանքի տարբեր պայմանների, պարբերաբար փոփոխվող շուկայական զների և զանազան կամայական որոշումների հիման վրա:

Տնտեսավարման այս ձևի պայմաններում պետությունը վարում էր տրնտեսության գործընթացին չմասնակցելու քաղաքականություն և բավարարվում էր միայն սեփականատերերի իրավունքների, երկրի ինքնուրույնության և հասարակական հիմնարկությունների գործունեության պահպանման գործառույթի կատարմամբ:

Պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնք խոչընդոտել են տնտեսության զարգացումը՝ ստեղծելով անկայուն վիճակ, նպաստելով հասարակության շերտավորմանն ու կենսապայմանների կտրուկ վատթարացմանը:

Կարելի է հիշատակել հատկապես 1848-1849 թթ. Իռլանդիայում վիկտորիա թագուհու «լեյսեյ ֆեա»-ի կառավարության տարիներին տեղի ունեցած միլիոնավոր մարդկանց սովը, զանազան հիվանդությունների ու տարերային

\* Ճրաններն արտահայտություն է, որը նշանակում է՝ «թողեք գործեն»:

1 Տե՛ս Փ. Սամյուելսոն, Վ. Նորդհաուս, Մակրոտնտեսագիտություն, հ. 1, «Ապոլոն», Հայաստանի ամերիկյան համալսարան, Եր., 1995, էջ 77:

աղետների հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ոչնչացումը<sup>2</sup>:

Տնտեսավարման երկրորդ եղանակը վարչաճրամայականն է, որը հատուկ էր ԽՍՀՄ-ին, Եվրոպայի ու Ասիայի սոցիալիստական երկրներին: Տնտեսական այդ համակարգի բնորոշ գծերն են՝ կենտրոնացված գնագոյացումը, պլանավորումն ու ֆինանսավորումը, արտադրության միջոցների հանրային սեփականությունը, հավասարաչափ բաշխումը, պետության մենաշնորհ դիրքը, ազատ մրցակցության բացակայությունը և այլն:

Տնտեսավարման այդ ձևին բնորոշ հատկանիշների դրսևորումը որոշակի նախադրյալներ ստեղծեց՝ լուծելու այնպիսի հիմնահարցեր, որոնք ազատ շուկայական տնտեսության մեխանիզմում չէին կարող ինքնակարգավորվել: Դրանք մասամբ, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Բ. Ղուշչյանը, վերաբերում էին հասարակության անդամների սոցիալական ապահովությանը, գիտության և գիտական հետազոտությունների զարգացմանն ու ֆինանսավորմանը, ազգային կարևոր նշանակության հարցերի լուծմանը<sup>3</sup>:

Տնտեսավարման այդ ձևի գործունեության վերջին շրջանում, չնայած վերակառուցողական բնույթ կրող միջոցառումների իրականացման փորձին, հակասությունները էլ ավելի սուր բնույթ կրեցին և հանգեցրին այդ տնտեսական համակարգի փլուզմանը, քանի որ պետական մենաշնորհի պայմաններում ինքնածախսածածկման մեխանիզմները չէին կարող գործել արդյունավետ:

Տնտեսական համակարգերի պատմական զարգացման ընթացքի հետազոտությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր երկրի տնտեսության տարբեր ոլորտներում ու բնագավառներում կատարվել են էական փոփոխություններ, մասնավորապես՝ շուկայական տնտեսությունում, որտեղ ազատ շուկայական հարաբերություններին զուգահեռ գործում են կարգավորվող շուկայական հարաբերությունները և հանգեցնում նոր համակարգի ձևավորմանը:

Ինչպես տեսնում ենք, տնտեսական համակարգի հաջորդ եղանակը կարգավորվող շուկայական տնտեսության համակարգն է, որի գործունեության հիմնական սկզբունքները գիտականորեն հիմնավորել է անգլիացի նշանավոր տնտեսագետ Ջ. Մ. Բեյնսը<sup>4</sup>:

Տնտեսական այս համակարգի հիմքը շարունակում է մնալ սեփականության բազմաձևությունը, ազատ գնագոյացումը, ազատ ձեռնարկատիրական գործունեությունը, ազատ մրցակցությունը և այլն: Կարգավորվող շուկայական տնտեսությանը բնորոշ միակ նոր հատկանիշն այն է, որ պետությունը, շուկան կարգավորող «անտեսանելի ձեռքին» զուգահեռ, մեծ տեղ է հատկացնում նաև պետության «տեսանելի ձեռքին»:

Տնտեսավարման այդ ձևը ընդունված է անվանել խառը տնտեսական համակարգ, որտեղ գործում են շուկայի կարգավորման երկու մեխանիզմ՝ անտեսանելի ձեռքը և պետության տեսանելի մեխանիզմ, որոնց միջև միայն փոխհամաձայնեցված գործառույթների իրականացումը կարող է նախադրյալներ ստեղծել տնտեսության և գնագոյացման պետական կարգավորման, պետության նպատակային խնդիրների լուծման և բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովման համար:

Խառը տնտեսական համակարգը տնտեսագիտության մեջ ընդունված է անվանել այն շուկայական տնտեսությունը, որի պայմաններում ցանկացած երկրի ազգային շուկան, տնտեսության բոլոր ոլորտները, ճյուղերն ու ենթա-

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս Հ. Բ. Ղուշչյան, Շուկայական տնտեսության ժամանակակից հարցերը, «Տնտեսագետ», Երևան, 1995, էջ 6:

<sup>4</sup> Տե՛ս Дж. М. Кейнс, Общая теория занятости, процента и денег, М., 1978:

նյութերը թե՛ շուկայի և թե՛ պետության կողմից մշակված տնտեսական լծակների միջոցով ենթարկվում են ինքնակարգավորման:

Այսօր առանձին երկրներում շուկայական և պետական կարգավորման մեխանիզմների համատեղ օգտագործումն ապահովել է բնակչության բարձր կենսամակարդակ: Այդ երկրների շարքին կարելի է դասել Օվեդիան, Մապոնիան, Նոր Զելանդիան, Հարավային Կորեան և այլ երկրներ: Հետևաբար, խառն տնտեսության կամ կատարյալ շուկայական տնտեսության վերաբերյալ դրույթները հիմնավոր են և արտացոլում են երկու մեխանիզմների համատեղ գործունեության արդյունավետությունը: Առանց վերապահության կարելի է ասել, որ այս հարյուրամյակի վերջում նշված մեխանիզմների արդյունավետ գործունեության շնորհիվ մակրոտնտեսական բարձր ցուցանիշներ ունեցող երկրների թիվը (այդ թվում նաև Հայաստանի) կարող է ավելանալ:

Հիմնավոր չէ տնտեսագետների այն կարծիքը, որ իբր պետությունը փոխարինում է շուկաներին, որով անտեսվում են կարգավորվող շուկայական մեխանիզմի կիրառման առավելությունները: Մեր կարծիքով, պետությունը իրականում ոչ թե փոխարինում է շուկային, այլ, իր հովանավորության տակ վերցնելով բոլոր սեփականատերերին, ձեռնարկատերերին, մշակում է մի կողմից նրանց ազատությունը չսահմանափակող, իսկ մյուս կողմից՝ նրանց գործունեությունը կարգավորող օրենքներ: Իսկ դա նա անում է հաստատագրված գները ուղղակի և անուղղակի հարկերի հաշվարկման կարգը գործողության մեջ դնելու, դրույքաչափերը, արտոնությունները սահմանելու և տնտեսությանն աջակցություն ցույց տալու մեթոդներն ու եղանակները որոշելու միջոցով:

Շուկայական տնտեսության պայմաններում սեփականության տարբեր ձևերի առկայությունն ապահովում է սեփականատերերի տնտեսական ազատությունը: Իսկ տնտեսության պետական կարգավորման ու տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ազատության ճիշտ զուգակցումը կարևոր նշանակություն ունի ինչպես տնտեսության բոլոր նպատակային խնդիրների, այնպես էլ գնային ռազմավարության հիմնախնդիրների լուծման համար:

Հետևաբար, շուկայական ուժերի և պետության համատեղ գործողությունները պետք է դիտել որպես ներկայիս տնտեսական համակարգի հիմնական առանձնահատկություն և արդյունավետ գործունեության ծավալման անհրաժեշտ պայման: Դրան համապատասխան, պահանջվում է օպտիմալացնել շուկայական տնտեսության հատկանիշների և տնտեսության պետական կարգավորման միջև հարաբերակցությունը: Վերջինս բխում է ինչպես շուկայական տնտեսության կայունացման, ռեսուրսների բաշխման ու արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներից, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների, հասարակության ու պետության շահերի զուգակցման անհրաժեշտությունից:

Դրանք ձեռք են բերվում յուրաքանչյուր երկրում տնտեսության մասշտաբով առաջադրված գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական ռազմավարության գործառույթների նպատակալսաց իրականացման ճանապարհով: Այդ գործառույթների համակարգում առանձնահատուկ նշանակություն ունեն տնտեսության պետական կարգավորման նպատակով ընդունված որոշումները, մշակված օրենքներն ու ձեռնարկվող մյուս միջոցառումները, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ամբողջ տնտեսության, այլ նաև գնադրյալման պետական կարգավորման համար:

Որքան էլ ազատ մրցակցության պայմաններում շուկան օժտված լինի գների ինքնակարգավորման գործառույթով, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտները անգոր են ազդելու գների որոշակի բացասական դրսևորումների վրա, այնուամենայնիվ գների պետական կարգավորումը ոչ միայն կարևոր է, այլև օբյեկտիվ անհրաժեշտություն: Դա նշանակում է, որ ազատ շուկայական

տնտեսությունը, որքան էլ կատարյալ լինի, չի կարող կարգավորել համընդհանուր ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջները, սոցիալական անհավասարությունները, չի կարող կանխել ինֆլյացիայի երևույթները, աշխատատեղերի կրճատումը, գործազրկության աճը և այլն:

Այսպիսով, գների պետական կարգավորման գործընթացի իրականացման անհրաժեշտությունն ու կարևորությունը պայմանավորված է ինչպես խառը տնտեսության համակարգի հիմնական օրինաչափություններով, այնպես էլ շուկայի ինքնակարգավորման և պետական կարգավորման միջև հարաբերակցության ճշգրտման, շուկայի կառուցվածքի ուսումնասիրության, արտադրական և անձնական սպառման պահանջների հարաբերակցության կարգավորմամբ:

Գների պետական կարգավորման համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր առաջավոր երկրներում ազատ գնագոյացմանն ու ազատ մրցակցությանը զուգընթաց, պետությունն ինքն է կարգավորում գնային քաղաքականությունը: Այդ նպատակով ստեղծվում են հատուկ վարչատնտեսական և իրավական մեխանիզմներ: Ծուկայական խառը տնտեսության համակարգի պայմաններում ձեռնարկության կողմից ազատ գնային գործընթացի կազմակերպումն առանձին դեպքերում սահմանափակվում է պետության կողմից և, դա օրյեկտիվ անհրաժեշտություն է: Նման սահմանափակումները կարող են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

- հաստատագրված և մենաշնորհ գների սահմանման, ազատ շուկայական գների կայունացման միջոցով:

- Ձեռնարկատիրության համար մշակված գնագոյացման պայմանների, գների գծով վերադիրների, շահութաբերության մակարդակի, գների սահմանային մակարդակի, մենաշնորհային գների նկատմամբ հսկողության և պետական ձեռնարկություններում արտադրված արտադրանքների գների սահմանման միջոցով:

- Ուղղահայաց և հորիզոնական գների սահմանման, գնային խտրականության, դեմպինգի քաղաքականության, ոչ որակյալ ապրանքների գծով գովազդային երևույթների կանխման միջոցով և այլն:

Ծուկայական տնտեսության պայմաններում գների պետական կարգավորման նշված ուղղությունները, ինչպես նաև գնագոյացման բնագավառում տեղ գտած թերություններն ու բացթողումները վկայում են, որ անհրաժեշտ է նախապատվությունը տալ խառը տնտեսությանը, որտեղ տնտեսական քաղաքականությունն ու դրա անբաժանելի մասը կազմող գնային քաղաքականությունն իրականացվում են շուկայի և պետության կողմից կարգավորվող գների համակարգի հիման վրա: Ինչպես տեսնում ենք, պետական և ոչ պետական ոլորտների շահերի ճիշտ զուգակցման ճանապարհով պետական կառավարման մարմիններն ստեղծում են ամբողջ տնտեսության և գնագոյացման պետական կարգավորման համակարգ, որը և հանգեցնում է ամբողջ շուկայական մեխանիզմի ինքնակարգավորմանը:

Անշուշտ, տնտեսական հարաբերությունների կարգավորման համակարգը ենթադրում է տնտեսական, ֆինանսական, գնագոյացման, արժույթային, բյուջետային, հարկային, վարկային և այլ հարաբերությունների այնպիսի կարգավորում, որի հիմնական նպատակն է սակավ ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման և օգտագործման հիման վրա հասնել առավելագույն արդյունքների:

Գների պետական կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ պահանջվում է մշակել գնագոյացման վրա պետական ներգործության հստակ և հուսալի համակարգ: Դրա համար անհրաժեշտ է լուծել մի շարք նպատակային խնդիրներ:

- Նախ՝ շուկայական տնտեսության անցումային փուլի պայմաններին համապատասխան մշակել գնագոյացման պետական կարգավորման կանոն-

անկարգ և դրան համապատասխան ձևավորել օրենսդրական նորմատիվային անհրաժեշտ ակտեր, գնագոյացման կարգավորման մեխանիզմներ, գների ձևավորման մեթոդներ ու սկզբունքներ, որոնք կարևոր են տեխնիկատնտեսական հաշվարկների իրականացման և գների մակարդակի որոշման համար:

• Երկրորդ՝ կիրառել այնպիսի տնտեսական լծակներ, մասնավորապես հարկաբյուջետային, ֆինանսավարկային, մաքսային, աշխատանքային և այլն, որոնք կարգավորված գների միջոցով կխթանեն տնտեսավարման շուկայական մեխանիզմի ձևավորման գործընթացը, կնպաստեն տնտեսավարող սուբյեկտների ու պետության շահերի զուգակցմանը, կհանգեցնեն տնտեսության կայունացմանը և վերարտադրության պարբերաշրջանային տատանումների համահարթմանը:

• Երրորդ՝ կայունացնել գները և բացառել ինֆլյացիոն երևույթների աճը՝ կապված ապրանքների պակասուրդի առկայության, ռեսուրսային շուկայում գների բարձրացման հետ, նպաստել մրցակցության շրջանակների ընդլայնմանը, գիտատեխնիկական առաջադիմության ոլորտում նորամուծությունների ներդրմանը և այլն:

• Չորրորդ՝ ապահովել շուկայի կողմից կարգավորվող և պետության կողմից հաստատագրված գների միջև այնպիսի հարաբերակցություն, որը կընկապատի սեփականության մասնավոր, պետական, համայնքային և այլ ձևերի գործունեության արդյունավետության բարձրացմանը, մրցակցության շրջանակների ընդլայնմանը և ազատ ձեռնարկատիրության զարգացմանը:

• Հինգերորդ՝ կանեցնել արտադրության անկումային երևույթները, խթանել արտադրական գործունեությունը, ապահովել հարկային եկամուտների աճ ոչ թե գների բարձրացման, այլ հարկային բազայի ընդլայնման, արտադրության խթանման ու տեխնիկական վերակառուցման ճանապարհով:

Գնագոյացման պետական կարգավորման հիմնական նպատակային խնդիրները կարող են լուծվել մի քանի մեթոդներով:

Գների պետական կարգավորման միջոցով տնտեսավարող առանձին սուբյեկտների վրա պետական ներգործությունը կարող է կատարվել ինչպես ուղղակի՝, այնպես էլ անուղղակի մեթոդներով:

Գների պետական կարգավորման վրա ուղղակի մեթոդով հնարավոր է ազդել գների մակարդակի որոշման մեթոդական ցուցումներ մշակելու, դրանց գնահատման ու հաշվարկման կարգը սահմանելու համապատասխան օրենսդրական, իրավական ու նորմատիվային ակտեր մշակելու միջոցով:

Մեթոդական ցուցումները մշակվում են ծախսերի դասակարգման, դրանց կազմի ու կառուցվածքի, ծախսերի առանձին խմբերի հաշվարկման կարգի վերաբերյալ, որոնք կազմում են ինքնարժեքի և գների մակարդակի որոշման ելակետային հիմքերը:

Տնտեսության մասշտաբով ուղղակի մեթոդով գների պետական կարգավորման գործընթացն իրականացվում է նաև հաստատագրված գների՝ միջոցով, որոնք սահմանվում և գործողության մեջ են դրվում օրենսդրական մարմինների կողմից:

“ Գնագոյացման ուղղակի կարգավորման մեթոդը տնտեսագիտության մեջ հաճախ անվանվում է նաև վարչական մեթոդ, որը ենթադրում է պետության կողմից գների ուղղակի սահմանում կամ դրանց մակարդակի փոփոխություն: Վարչական մեթոդով գների կարգավորումը իրականացվում է նաև իրավական և նորմատիվային օրենսդրական ակտերի անմիջական մշակման միջոցով, որոնք հիմք են ծառայում գների մակարդակի սահմանման կամ փոփոխման համար:

“ 1992 թ. հունվարի սկզբին Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած որոշմամբ, բավականին լայն էր հաստատագրված գների շրջանակը: Հետագայում այն վերանայվեց, և այսօր հաստատագրված գներ են սահմանված էլեկտրաէներգիայի, հեռախոսի, խմելու և ոռոգման ջրի, ջեռուցման, էլեկտրոտրանսպորտի և զանազան այլ ծառայությունների համար:

Զարգացած երկրներում պետության կողմից հաստատագրված և ազատ շուկայական կարգավորված գների հարաբերակցության ուսումնասիրությունից պարզվում է, որ առանձին երկրներում հաստատագրված գներն ունեն բավականին բարձր տեսակարար կշիռ՝ 10-15% (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակից երևում է, որ հաստատագրված գների բաժինը համեմատաբար ցածր է ԱՄՆ-ում և Դանիայում, թեև այդ երկրներում ուղղակիորեն կարգավորվում են էլեկտրաէներգիայի և բազմաթիվ այլ ծառայությունների սակագները: Մյուս երկրներում ուղղակի մեթոդով սահմանված գների բաժինը համեմատաբար բարձր է հատկապես Հունաստանում, Ճապոնիայում և Ծվեյցարիայում, Ֆրանսիայում:

Աղյուսակ

**Հաստատագրված գներով ապրանքների ու ծառայությունների իրացման բաժինը<sup>5</sup>**  
(ընդհանուր գների կառուցվածքում հաստատագրված գների բաժինը տոկոսով)

Երկրներ	Հաստատագրված գների բաժինը (%)
Հայաստան	0.01
Ավստրալիա	10
Հունաստան	20
Դանիա	6
Իսպանիա	10
Կանադա	10
ԱՄՆ	5-10
Ֆրանսիա	25
Ծվեյցարիա	50
Ճապոնիա	19

Առանձին երկրներում անհրաժեշտության դեպքում օրենսդրությամբ թույլատրվում է պետականորեն կարգավորվող գները բարձրացնել: Օրինակ, Ավստրիայում արհմիութենական կազմակերպության և ձեռնարկատիրության ասոցիացիայի որոշմամբ և կառավարության համաձայնությամբ իրավունք է վերապահված տարվա որոշակի ժամկետում կտրուկ բարձրացնել կարգավորվող գների բաժինը:

Ծվեյցարիայում գործող օրենսդրության համաձայն՝ նախատեսված է որոշակի ժամանակում կայունացնել գները:

Աղյուսակից երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում կարգավորվող գների շրջանակը անչափ փոքր է, թեև էլեկտրաէներգիայի գինը այսօր կարգավորվում է պետության կողմից: Եթե ընդունենք, որ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո այն կկարգավորվի 71% արժեթղթեր ստացողների կողմից, նշանակում է այդ շրջանակը ավելի կփոքրանա և կհանգեցնի ճգնաժամի խորացմանը:

Ուստի, մեր կարծիքով, հանրապետությունում գնային քաղաքականության դերի բարձրացման, գնագոյացման պետականորեն կարգավորման նպատակային խնդիրները արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է ընդլայնել այն ապրանքների ու ծառայությունների շրջանակը, որոնց գները ուղ-

<sup>5</sup> Տվյալները համակարգված են ըստ հետևյալ աշխատությունների՝ **В. К. Сенчагов**, Реформа цен: проблемы и реальность. М., 1991, с. 16, 76-81; **Е. Д. Чувилин**, **В. Г. Дмитриева**, Государственное регулирование и контроль цен в капиталистических странах. М., 1991: Հայաստանի տվյալները հաշվարկվել են 1999 թ. հիման վրա:

ղակիորեն սահմանվում է պետության կողմից: Կարծում ենք, որ դա կնպաստի հանրապետության ներկայիս ճգնաժամային վիճակի հաղթահարմանը և կիւրթանի առանձին ոլորտների գործունեությունը:

Հետևաբար համաձայն ենք <sup>1</sup> Խ. Մարկոսյանի այն տեսակետին, որ հանրապետության տնտեսության մասին փոխում ոչ պակաս կարևորություն ունի պետության կողմից վարվող գների քաղաքականությունը կամ, այլ կերպ ասած, գնագոյացման գործընթացին պետ կան միջամտությունը<sup>6</sup>:

Այս առումով գյուղացիական տնտեսության գործունեության խթանման նպատակով անհրաժեշտ ենք համարում, որ հիմնական կարևոր գյուղատրնտեսական մշակաբույսերի հաստատագրված գներ, որոնք ներքին կիւրթանեն վերամշակող արդյունաբերության զարգացումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուղղակի մեթոդով գների պետական կարգավորումը և գների նկատմամբ հսկողությունը կարող են իրականացվել հետևյալ ձևերով.

- որոշակի ժամանակի համար օրենսդրությամբ գնի կայուն մակարդակի սահմանում,

- շուկայի իրավիճակի փոփոխության և զանազան այլ պատճառներով կարգավորվող գների մի մասի կայունացում և առավելագույն կամ նվազագույն գնի սահմանում,

- շուկայի ավելի մեծ հատված զբաղեցնելու, սպառողներին հրապուրելու և իրացման ծավալը ավելացնելու նպատակով երաշխավորված նվազագույն գների սահմանում<sup>7</sup>,

- պայմանագրային գների կիրառում<sup>8</sup>,

- նպատակային գների կիրառում, երբ շուկայական գինը այդ գնից ցածր է, ապա պետությունը պարտավորվում է վճարել դոտացիա,

- նախահաշվային գների օգտագործում, որոնք սահմանվում են աշխատանքի նախահաշվային արժեքի հիման վրա:

Գնագոյացման պետական կարգավորման անուղղակի մեթոդով արտադրողների վրա անուղղակի ներգործություն է իրականացվում ֆինանսավարկային, հարկաբյուջետային, աշխատանքի վարձատրության, մաքսային քաղաքականության, փոխադրումների, սակագների փոփոխության և այլ տրնտեսական լծակների միջոցով:

Տնտեսական լծակների հիման վրա գների պետական կարգավորումը միաժամանակ կարող է հանգեցնել պահանջարկի և առաջարկի միջև օպտիմալ հարաբերակցության և արտադրության կառուցվածքային փոփոխությունների կայունացմանը, տնտեսավարող սուբյեկտների և պետության շահերի արդյունավետ զուգակցմանը և այլն:

Տնտեսական լծակների փոփոխությունների մասին որոշումները պետք է ընդունվեն տնտեսավարող սուբյեկտների և գնագոյացման մարմինների կողմից՝ հաշվի առնելով կարգավորման մեթոդների կիրառման հնարավորություններն ու արտադրանքի որակի բարձրացումը, պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը ու բնակչության վճարունակության մակարդակը:

Իսկ առանձնապես կարևոր ու անհրաժեշտ է շուկայական տնտեսության ուղին ճոր թևակոխած երկրների համար, որոնցում դեռևս վերջնականապես

<sup>6</sup> Ա. Խ. Մարկոսյան, Պետությունը և շուկան, Եր., 2000, էջ 503:

<sup>7</sup> Օրինակ՝ ԱՄՆ-ում պետությունը միջոցներ է առանձնացնում ֆերմերներից արտադրանքը գնելու նպատակով, և սահմանվում է, այսպես կոչված, գրավային գին, որը դիտվում է որպես երաշխավորված նվազագույն գին: Երբ շուկայական գինը գերազանցում է գրավային գնին, ֆերմերը կարող է իր արտադրանքը վաճառել, իսկ երբ շուկայական գինը ցածր է գրավային գնից, նշանակում է՝ վաճառում է պետությունը:

<sup>8</sup> Տե՛ս Ս. Թրուշիցին, Особенности государственного регулирования цен во Франции, "Вопросы экономики", 1991, N 6, էջ 58-59:



չեն ձևավորվել շուկայական կառույցները, չեն ընդունվել գիտականորեն հիմնավորված օրենսդրական դրույթներ ու նորմատիվային ակտեր, իսկ տնտեսությունը զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դեռևս գտնվում է ճգնաժամային վիճակում:

Նման իրավիճակում հայտնված երկրներում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում, անհրաժեշտ է ընդլայնել տնտեսության վրա պետության ներգործության շրջանակները, վերակառուցել առանձին ոլորտների ու զանազան ոլորտների կառուցվածքները, կատարելագործել հարկային ու գնային քաղաքականությունը, ընդլայնել մրցակցության շրջանակները, կիրառել հիմնավորված տնտեսական լծակներ և այլն:

Հանրապետության անցումային տարիների տնտեսության պետական կարգավորման հիմնահարցերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության կողմից անհրաժեշտ վերահսկողություն չի ապահովվել շուկայական միջավայրի ձևավորման ու գնահատման, մասնավորեցման գործընթացի արդյունավետ իրականացման, ամբողջ տնտեսության ու գների պետական կարգավորման, ճկուն հարկային քաղաքականություն վարելու, երկրի ֆինանսական վիճակի կայունացման, ռեսուրսների նպատակային օգտագործման, բաշխման հարաբերությունների կարգավորման բնագավառներում:

Անցումային տարիներին կառավարությունը լուրջ ուշադրություն չի դարձրել գների պետական կարգավորման վրա, որի պատճառով գնակարգավորման հարցերով զբաղվող մարմինների թիվը աստիճանաբար կրճատվել է, ամեն ինչ թողնվել է դեռևս չձևավորված, շուկայի մենաշնորհային կարգավիճակում հայտնված առանձին նախարարություններին, որի պատճառով խախտվել է միկրոտնտեսական և մակրոտնտեսական հավասարակշռությունը:

Այս ամենը վկայում է, որ, իրոք, անցումային տարիներին կառավարությունը առաջնորդվում էր «լեյսել ֆեա»-ի ժամանակներին բնորոշ դրույթներով, որի պատճառով արտասահմանյան ֆինանսական կազմակերպությունների կողմից առաջարկված ծրագրերի հարկադրաբար ընդունումը և դրանցով դեկավարվելը երկիրը հասցրեց ներկա աղետալի վիճակին՝ հանգեցնելով ֆինանսական արտաքին պարտքի ավելացմանը, որը 1999 թ. կազմում է ՀՆԱ-ի 41,7 տոկոսը, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին առևտիր ընթացիկ հաշվի պակասուրդի աճը՝ 1998 թ. 27,1-ից, 1999 թ. կազմել է 28,6 տոկոս<sup>9</sup>:

Նման պայմաններում, բնականաբար, հաշվի չի առնվել տարերային շուկայում գործող ազատ շուկայական գների ու պետականորեն կարգավորվող գների հարաբերակցությունը, անտեսվել են գների բաշխման և վերաբաշխման, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման գործառույթների պահանջները: Առաջնությունը տրվել է միայն գների հաշվարկման ու պլանավորման գործառույթին: Դա էր պատճառը, որ ահռելի տարբերություն էր նկատվում պետական պլանային առաջադրանքների՝ մակրոտնտեսական ցուցանիշների և ստացված փաստացի արդյունքների միջև, որն էլ հանգեցրեց բյուջեի պակասուրդի մեծացմանը: Այդ պատճառով ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի պակասուրդը 1998 թ.՝ 3,7-ից բարձրացել և 1999 թ. կազմել է 5,7 տոկոս<sup>10</sup>:

Հանրապետության կառավարությունը, բյուջեի պակասուրդի ծածկման այլ ուղիներ փնտրելու փոխարեն, առաջնորդվեց նախկին գործելակերպով և որդեգրեց գների բարձրացման քաղաքականությունը:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ առանց տնտեսության պետական կարգավորման և մասնավորապես գների պետական կարգավորմանը ցուցա-

<sup>9</sup> Տե՛ս Հ. Բ. Պուշյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 2000, էջ 18:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

քերվող նոր մոտեցման, առանց հաշվի առնելու տնտեսագիտության կողմից հիմնավորված շատ դրույթներ՝ կապված ճկուն հարկային քաղաքականության, ռեսուրսների արդյունավետ բաշխման ու օգտագործման հետ, հնարավոր չէ հաղթահարել տնտեսության ճգնաժամային երևույթները:

Պատմականորեն հիմնավորվել է, որ այն երկրները, որոնք ժամանակին հայտնվել էին ճգնաժամային վիճակում և առաջնորդվել են տնտեսության պետականորեն կարգավորման դրույթներով, արդյունավետ ձևով կիրառել են գների պետական կարգավորման ուղղակի և անուղղակի ձևերը, կարճատև ժամանակում առաջադիմել են և ապահովել զարգացման բարձր մակարդակ:

Այդ մասին են վկայում 1929-1933 թթ., ինչպես նաև II համաշխարհային պատերազմից հետո ծանր վիճակում հայտնված երկրներում՝ մասնավորապես Գերմանիայում և Ասիայի մի շարք հանրապետություններում ճգնաժամային երևույթների հաղթահարումը, հիմնավորված ռազմավարությունների մշակումը և ներդրումը, որոնք նախադրյալներ ստեղծեցին ոչ միայն իրավիճակը հաղթահարելու, տնտեսությունը կայունացնելու, աճի կայուն տեմպեր ապահովելու, գործազրկությունը կրճատելու, ազատ մրցակցության շրջանակները ընդլայնելու, այլև համաշխարհային մասշտաբով բարձր բնագծերի ապահովման համար<sup>11</sup>:

Նշանակում է՝ ճգնաժամային վիճակում հայտնված երկրներում կատարված բարեփոխումների՝ հիմքում դրվել է տնտեսության պետական կարգավորման, հարկային, գնային հիմնավորված ռազմավարության դրույթներ, որոնք անչափ կարևոր դեր կատարեցին տնտեսավարող սուբյեկտների նպատակային խնդիրների լուծման, հարկերի, գների գործառույթների գնահատման և իրականացման համար:

Շուկայական գների ձևավորված մակարդակը գնահատելու գործում կարևոր նշանակություն ունի արտադրողների և սպառողների վարքագծի, տրնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցության արդյունավետության ուսումնասիրությունը:

Արտադրական ռեսուրսների և ապրանքների շուկայում արտադրողներն ու սպառողները գործում են ոչ թե կամայաբար, այլ շուկայի միջոցով կարգավորվող գներով և իրենց շահերին ու նպատակային խնդիրներին համապատասխան՝ փոխում են իրենց վարքագիծը: Ի դեպ, տնտեսավարող սուբյեկտների միջև գոյություն ունեցող այդ փոխադարձ կապերը, ինչպես արդեն նշել ենք, ձևավորվում են մրցակցության միջավայրում, որտեղ գներն ունեն առանձնահատուկ նշանակություն:

Գների պետական կարգավորման դերն այն է, որ շուկայի գործունեության արդյունքները անմիջականորեն առնչվում են զին կատեգորիայի հետ, որը կարգավորվում է պահանջարկի և առաջարկի օրենքների պահանջներով:

Դա բացատրվում է նրանով, որ եթե պահանջարկի հաշվարկման հիմնական օրինաչափությունները արտադրական ռեսուրսների և ապրանքային շուկաներում կարգավորվում են սպառողների վճարունակության ու շուկայական գների միջոցով, ինչպես նաև սպառողների միջև մրցակցության արդյունքներով, ապա առաջարկի հաշվարկման հիմնական օրինաչափությունները կարգավորվում են արտադրողների ցանկությունների ու գների միջոցով և մրցակցության արդյունքներով:

Եթե արտադրողների միջև մրցակցության արդյունքներով ձևավորվում ու կարգավորվում են արտադրության և շրջանառության ծախսերը, ապրանքի որակը, գինը և արտադրողների վարքագիծը, ապա սպառողների միջև մրցակցությունը, ներգործելով արտադրողների գործունեության վրա, շուկայում ձևավորում է ապրանքների նկատմամբ պահանջարկը, այն բավարարող առաջարկը և դրան համապատասխան՝ կարգավորվող գինը:

<sup>11</sup> St'u Л. Эрхард, Благосостояние для всех. М., 1991, էջ 14:

Գնագոյացման պետական կարգավորման արդի հիմնախնդիրների ուսումնասիրության հիման վրա հանգել ենք այն հետևության, որ գնագոյացման նպատակային խնդիրների լուծման անհրաժեշտությունից էլնելով՝ ցանկալի է ընդլայնել պետականորեն կարգավորվող ապրանքների ու ծառայությունների շրջանակները:

Գնահատելով գնագոյացման կարգավորման գործընթացում հարկարյուջետային, ֆինանսավարկային, մաքսային և այլ լծակների ուղղությամբ միջոցառումների իրականացման կարևորությունը՝ նպատակահարմար ենք գրտնում, որ մինչև այդ լծակների ուղղությամբ ընդունված համապատասխան որոշումները գործողության մեջ դնելը անհրաժեշտ է մանրակրկիտ վերլուծություններով հիմնավորել դրանց ազդեցությունը գների բարձրացման, հետևապես նաև բնակչության զնդունակության փոփոխության վրա:

**Г. В. БАГДАСАРЯН - *Современные проблемы государственного регулирования ценообразования.*** - В статье рассматривается важность участия государства в рыночной экономике в переходный период, обосновывается необходимость решения проблем государственного регулирования ценообразования, обеспечения соотношений цен, регулируемых рынком и государством. Процесс государственного регулирования ценообразования приведет к тому, что рост макроэкономических показателей в масштабе экономики будет обеспечиваться не посредством повышения цен, а путем стимулирования производства.

Для регулирования ценообразования государство воздействует на экономические субъекты прямым и косвенным методами. В связи с этим подчеркивается значение увеличения доли установленных государством цен, расширения законодательного поля, разработки нормативных актов. Государственное регулирование ценообразования косвенным образом гарантируется бюджетно - налоговой, кредитно-финансовой, таможенной политикой, которые играют решающую роль в финансовой стабилизации экономики.

Недостаточное внимание государства к вопросам регулирования ценообразования в последние годы привело к увеличению в Республике Армения государственного долга, отрицательного дефицита внешней торговли и государственного бюджета, которые имеют высокий удельный вес в структуре ВВП и свидетельствуют о финансовой нестабильности экономики.